

անհոգ զուարթութիւնը, որ վտանգին ծանօթութիւնը չունի բնաւ (աստ, 209), եւ կը վատնէ իւր ուժերը՝ որոց պէտք պիտի ունենար վտանգին դիմադրելու համար: Իւր թեթեւութեան համբաւը կը հասնէր ամէն կողմ, եւ հեռաւոր Կիլիկիայէն բանաստեղծ մ'այսպէս կը խօսէր անոր.

« Մանկունքը քո զուարթալի
Նըման նորոգ բուրաստանի.
Դըստերըք քո պաճուճալի,
Յերգ 'ւի քընար միշտ ի խաղի »
(Շնր. Եղեա. 16):

Այս զուարթութիւնն իսկ էր որ կեանք տուաւ Բագրատունեաց քաղաքին, եւ այս զուարթութիւնն իսկ պիտի կապտէր անոր կեանքը: Այսպէս ծնան ու մեռան նաեւ Աթէնք ու Կորնթոս:

Սոսկալի էր հարուածը՝ զոր տուաւ անոր Չարմաղան 1236ին. անբաւ մահեր, աւեր, կողոպուտ եւ գերութիւն. որովհետեւ չուզեցին խոնարհիլ հզօրագոյն թըշնամույն առջեւ, մոռնալով՝ որ զԱնին հիմնող ու պահպանող բագրատունի զօրեղ բազուկը վաղուց բեկած էր. եւ ապաւինելով իրենց «յղփութեան» որ «յամբարտաւանութիւն ամ զնոսա, եւ ամբարտաւանութիւնն ի կորուստ», ինչպէս կը խորհրդածէ Կիրակոս իմաստուն կերպով (138):